ՏԱՆԹԷ ԵՒ ԱԼԻՊՇԱՆ

ԳՐԵՑ՝ ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

(«Մահուան Տեսիլ», Ա. մաս)

Մենք ափ ենք ելնում միասին եւ նայում ենք մեր շուրջը մի պահ.
Լռութիւն է, մռայլ մառախուղ, իսկ վերից գունատ մի մահիկ
Իր մեռեալ լոյսի հետ մէկտեղ տարածում է տխրութիւն ու ահ
Այդ անծիր եղերքի վրայ անսահման Սոսկումի ու Մահի:

Քայլում ենք, իրարու բռնած, քայլերով տարտամ, երերուն,
Անուղի, ինչպէս մոլորուած երկու կոյր, կամ անօգ մանուկ:
Միեւնոյն մառախուղն է բռնել թէ՛ մօտիկը մեր, թէ՛ հեռուն,
Միեւնոյն լռութիւնն անհուն:

Խտանում է մեր դէմ մառախուղը. ժայռեր են կարծես ու քարեր
Պարսպի նման բարձրացել եւ բռնել ճանապարհն անդարձ:
Մօտենում ենք մենք ժայռերին, եւ տեսնում ենք վիթխարի ծառեր,
Եւ մտնում ենք ահա խաւարով ու ահով լեցուն մի անտառ:

Ծառերի միջով վիթխարի գնում ենք դանդաղ մենք առաջ,
Կանգնում ենք, ականջ ենք դնում լռութեան մէջ երկար ու երկար.
Եւ ահա հնչում է մթին անտառի խորքից մի հառաչ.
Այդ ե՞րդ է արդեօք, հեկեկա՞նք, թէ՞ տրտունջ՝ քնարով երգած:

Լսւում է ապա մօտիկից մի հանդարտ, դանդաղ ոտնաձայն.
Մօտենում է մէկը. դէպի մե՛ղ, դէպի մե՛ղ է գալիս ահա նա.
Եւ ահա, ծառերի ետեւից ելնում է մի այր գլխաբաց.
Վարդապե՞տ է նա, մուրացի՞կ, թէ՞ դեղջուկ, աղքատ քահանայ:

Լուսնի սառ լոյսերով ողողուած՝ մօտենում է նա երերուն
Քայլերով, կանգնում է մեր դէմ. ուրուական է կարծես նա ցաւի.
Փոքրիկ է. նիհար. կիսամերկ. ճակատապինդ — սակ է կրում,
Եւ ձեռքին բռնած նա ունի մի հսկայ արծաթեայ տաւիղ:

Հատնում է մօրուքն սպիտակ մինչեւ սրունքները նրա՝
Սպիտակ սաւանի նման ծածկելով մերկութիւնը ծերի.
Հայեացքով տխուր ու անօգ նայում է նա լուռ մեր վրայ,
Եւ ապա, դառնալով Վարպետին, նա ասում է ձայնով մտերիմ.

«— Վարպե՞տ, ո՞հ, ե՛ս էլ քեզ նման մի գիշեր աշխարհից անցայ,
«Ապրեցի, իբրեւ վանական, հայրենի եղերքում քո ծովի.
«Բայց չքնաղ հայրենիքը քո՝ ինձ համար հայրենիք չդարձաւ,
«Եւ ծովը ձեր այն ծիծաղկուն՝ չբուժեց իմ սիրտը ցաւից:

«Աշխարհում շաչող հողմերից այն կղզում ապաստան գտած,
«Զգեցած սեւասեւ սգեմ՝ ես տաւիղը սակայն սիրեցի.
«Եւ տաւիղը չեփոր դարձրած՝ քերթութեան պարտէզը մտայ,
«Որ կորած հայրենիքս երգեմ եւ անցեալը նրա հրածին:

«Երգեցի ես ձայնով առնական ամրոցներն ու բերդերը հայոց,
«Ոստանները հայոց արքայից, պալատները նոցա փառահեղ.
«Երգեցի Կարմիր Աւարայրը, Մասիսը՝ աստղերին հայող,
«Զգտելով հին փառքը հայոց սրտերում անմար միշտ պահել:

«Քնարով մարտի կոչեցի ես նոցա՝ յանուն անցեալի,
«Կոչեցի ելնել վերստին, թօթափել փոշին բարբարոս,
«Կոչեցի արժանի լինել մեր նախնեաց փառքին պանծալի՝
«Վառելով ջահերն անցեալի, իբրեւ նո՛ր փրկութեան փարոս:

«Եւ երգս ի զուր չհնչեց: Հայրենի եղերքից քո լուրթ
«Թռչելով, իբրեւ հրաւէր, դէպի հայրենիքն իմ հեռու,
«Նա ոտքի հանեց քաջարի այրերի անմահ մի սերունդ,
«Որ ելաւ գերութեան փոշուց հայրենեաց համար կռուելու:

«Եւ թէեւ քէնով բարբարոս փորձեցին նոքա, դարաւոր
«Ոսոխները հայոց աշխարհի, մեզ արեամբ ողողել կրկին,
«Բայց վսեմ մեր երթը եղաւ անցեալի փայլով փառաւոր,
«Եւ խաղա՛ղ սրտով ես մեռայ՝ մինչեւ մահը քնարը ձեռքիս»:

Ասաց. եւ խփեց քնարին նա մոմէ մատներով դեղին,
Աչքերում ամեհի մի հուր, մօրուքով մերկութիւնը ծածկած,
Եւ ձայնը նրա քնարի, որ նման էր ձայնին թիթեղի,
Հնչում էր, ինչպէս մի հիւանդ, մահամերձ ընկած մանկան լաց:

Եւ տաւիղն հնչելով հեռացաւ, խարխափով մտաւ նա նորից
Անտառի խորքը խաւար, ուր տիրում էր տաղնապ ու հառաչ:
Մենք երկար լսեցինք նրա քնարի հառաչքը խորին,
Մինչ սուզուեց, լռեց նա հեռուում... եւ անձայն անցանք մենք առաջ:

© National Library of Armenia